ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2025թ. հոկտեմբերի 29-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 22-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Հ.Խաչիկյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

2. ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

3. Հաղորդում առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատման մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):

4. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկուցող՝ ի.գ.թ., դոցենտ Օլիպմիա Գեղամյան):

Հաշվի առնելով, որ ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը նախապես ուղարկվել էր խորհրդի անդամներին՝ ի.գ.թ., դոցենտ Օ.Գեղամյանը ամփոփ տեղեկություններ ներկայացրեց ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆեսոր Վ.Հովհաննիսյանը, պրոֆեսոր Ս.Առաքելյանը, պրոֆեսոր Հ.Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվետվությունը գնահատել դրական (կցվում է):

2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկուցող՝ ի.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Դանիելյան):

Հաշվի առնելով, որ ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը նախապես ուղարկվել էր խորհրդի անդամներին՝ ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Դանիելյանը ամփոփ տեղեկություններ ներկայացրեց ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆեսոր Գ.Հարությունյանը, պրոֆեսոր Ս.Դիլբանդյանը, պրոֆեսոր Հ.Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվետվությունը գնահատել դրական (կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատման մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոնի վարիչները ներկայացրին ըստ ամբիոնների հաստատված մագիստրոսական թեզերի թեմաները և ղեկավարներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաները և ղեկավարներին:

4. Ընթացիկ հարցեր:

4.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա առկա ուսուցման ասպիրանտ Նոննա Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա) Հաստատել ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ Նոննա Հարությունյանի՝ «Թվային օբյեկտների հայտնաբերման, ամրագրման, և օգտագործման կրիմինալիստիկական հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք – դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»,

Բ) Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Վահե Ենգիբարյանին,

Գ) Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Գոհար Մուրադյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.թ., դոցենտ Վ.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա) Հաստատել ԵՊՀ Սահմանադրական իրավունքի հայցորդ Գոհար Մուրադյանի՝ «Իրավական ակտերի գործողության կասեցման արդի հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02- «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»,

Բ) Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Դանիելյանին,

Գ) Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Էլեն Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա) Հաստատել ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Էլեն Գրիգորյանի՝ «Միջազգային կազմակերպությունների պրակտիկայի ազդեցությունը ներպետական իրավունքի աճող համալիրության վրա. սիներգետիկ հարացույց» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն»,

Բ) Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոցենտ Տարոն Սիմոնյանին,

Գ) Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Ֆենյա Աղաբեկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա) Հաստատել ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հայցորդ Ֆենյա Աղաբեկյանի՝ «Իրավունքի հակաճգնաժամային արժեքանությունը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն»,

Բ) Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Արթուր Վաղարշյանին,

Գ) Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.5. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Մոնթե Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա) Հաստատել ԵՊՀ Քրեական իրավունքի հայցորդ Մոնթե Թադևոսյանի՝ «Հոգեկան հարկադրանքի քրեաիրավական նշանակությունը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05- «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»,

Բ) Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Սերգեյ Առաքելյանին,

Գ) Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.6. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Անահիտ Անտոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության փոփոխման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա) Փոփոխել ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ Անահիտ Անտոնյանի՝ «Վճռաբեկ դատարանի լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման և հաստատել այն «Կատարման շրջադարձը՝ որպես դատական ակտի բեկանման հիմք» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք – դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»,

Բ) Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.7. ԼՍԵՑԻՆ - Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի առկա ասպիրանտ Լիանա Արսենի Սերոպյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատելու և գիտական ղեկավար նշանակելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի. գ. թ., դոցենտ Ա.Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել ԵՊՀ ռեկտոր պրն. Հ.Վ.Հովհաննիսյանին՝ միջնորդելու, Հայ-Ռուսական համալսարանին՝ հաստատելու եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Լիանա Սերոպյանի՝ «Հանրային կարգի և զուգահեռ ընթացող վարույթների ազդեցությունը ներդրումային արբիտրաժային վճիռների կայացման, ճանաչման և կատարման վրա» թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը իրավաբանական գիտություններ, ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ, գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վիգեն Քոչարյանին:

4.8. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Արփինե Հովհաննիսյանի՝ «Մեդիա իրավունքի որոշ հիմնահարցեր» վերտառությամբ աշխատությունը որպես մենագրություն տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Մագարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Արփինե Հովհաննիսյանի՝ «Մեդիա իրավունքի որոշ հիմնահարցեր» վերտառությամբ աշխատությունը երաշխավորել տպագրության՝ որպես մենագրություն:

4.9. **ԼՍԵՑԻՆ**. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) նախաձեռնությամբ 2025 թվականի հոկտեմբերի 17-19 Աղվերանում կազմակերպված՝ քրեական իրավունքի և քրեական դատավարության հիմնախնդիրներին նվիրված միջբուհական դատախաղ-մրցույթում հաղթող ճանաչված թիմի ուսանողներին միանվագ անվանական կրթաթոշակ սահմանելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) նախաձեռնությամբ 2025 թվականի հոկտեմբերի 17-19 Աղվերանում կազմակերպված՝ քրեական իրավունքի և

քրեական դատավարության հիմնախնդիրներին նվիրված միջբուհական դատախաղ-մրցույթում հաղթող թիմի կազմում հանդես գալու համար միանվագ 40000-ական ՀՀ դրամի չափով անվանական կրթաթոշակ սահմանել հետևյալ ուսանողների համար.

Լիանա Արթուրի Օսիպյան – մագիստրատուրա, 1-ին կուրս
Լուսինե Արմանի Ավետիսյան – մագիստրատուրա, 2-րդ կուրս
Մարիամ Արծրունի Չիլինգարյան – մագիստրատուրա, 1-ին կուրս
Վահե Ռուդիկի Միերյան – բակալավրիատ, 4-րդ կուրս

Խորհրդի նախագահ ***Հ.Խաչիկյան***

Խորհրդի քարտուղար ***Տ.Սուջյան***

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի կողմից 2024-2025թթ. ընթացքում

իրականացված ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին

Ձեր ուշադրությանն ենք ներկայացվում քաղաքացիական դատավարության ամբիոնի կողմից 2024-2025թթ. ընթացքում իրականացված գործունեության մասին հաշվետությունը: Հաշվի առնելով կատարված լայնածավալ աշխատանքը՝ նպատակահարմար ենք գտնում այն ներկայացնել հիմնական երկու՝ ուսումնական ու գիտական ուղղություններով:

Միևնույն ժամանակ, մեր ուշադրությունից դուրս չեն մնացել նաև հարակից այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են ամբիոնի աշխատանքի հանրայնացմանը և միջազգային համագործակցությանն ուղղված ջանքերը, ինչպես նաև գիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացները:

1. Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք

ա/ Դասախոսությունների անցկացման եղանակներ

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը շարունակել է աշխատանքները ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման և դրանց որակի կատարելագործման ուղղությամբ: Կախված թեմայի արդիականությունից, բարդությունից, պարզաբանման ենթակա հարցերի առանձնահատկությունից՝ դասախոսություններն անցկացվել են ինչպես ավանդական եղանակով, այնպես էլ ինտերակտիվ մեթոդներով: Մշտապես օգտագործվել են դիտակտիկ նյութեր, սլայդներ, և պրակտիկ օրինակների հիման վրա պարզաբանվել են գիտագործնական հարցերը:

Ամբիոնային առարկաները հիմնականում ապահովված են հայերեն դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, դասախոսության տեքստերով, մեթոդական ցուցումներով, խնդրագրքերով, թեստերով, գործնական պարապմունքի նյութերով, ծրագրերով:

Ամբիոնի դասախոսներն ակտիվորեն օգտագործել են ուսանողներին տրամադրված էլեկտրոնային հասցեների ընձեռած հնարավորությունները և դասավանդվող առարկաներին վերաբերող նյութերը էլեկտրոնային ձևով՝ Moodl համակարգով տրամադրել ուսանողներին: Դասախոսությունների ընթացքում սմարթ գրատախտակների ու էլեկտրոնային գործիքների կիրառումը դասընթացները դարձնել են առավել պատկերավոր, օրենսդրական իրավակարգավորումներին անմիջական հասանելիությունն էլ իր հերթին օգնել է շեշտադրումը տեղափոխել վերլուծական մտքի վրա :

Հարկ է նշել, որ ամբիոնի անդամների կազմում ընդգրկված են ինչպես տեսաբաններ, որոնք զբաղվում են տեսության դասավանդմամբ, այնպես էլ պրակտիկ գործունեություն իրականացնողներ, ինչը թույլ է տալիս գիտության ու

պրակտիկայի փոխադարձության հիման վրա՝ ուսանողներին մշտապես ներկայացնել տեսական մոտեցումներ ու պրակտիկ գիտելիքներ, գործնական հմտություններ, որի պարագայում ուսանողների իրավաճանաչողության մեջ ամրապնդվում է գիտություն-պրակտիկա կապը:

բ/ Սեմինար և գործնական պարապմունքների անցկացման եղանակները և մեթոդները

Հաշվետու ժամանակահատվածում առանձնակի ուշադրություն է դարձվել սեմինար և գործնական պարապմունքներին, հստակ խնդիր է դրվել սեմինար պարապմունքներին շեշտը դնել ուսանողների տեսական-գիտական իմացության խորացման վրա, նրանց կողմից գիտական նյութը համակարգված ներկայացնելու հմտությունների վրա, իսկ գործնական պարապմունքներին շեշտը դնել գործնական խնդիրների լուծման, իրավիճակների քննարկման, դատական նախադեպերի վերլուծության, գործնական ուղղվածության, փաստաթղթերի կազմման հմտությունների վրա:

Այս առումով պետք է հատկապես կարևորել սեմինարավարների պատրաստվածության բարձր մակարդակն ու գիտելիքների հաղորդման հմտությունները :

Ամբիոնի առանձին դասախոսների կողմից սեմինար պարապմունքների ժամերի շրջանակներում կազմակերպվել են թեմատիկ գիտահետազոտական քննարկումներ, որն ունի ուսանողների գիտահետազոտական հետաքրքրությունները բարձրացնելու հիմնավոր նպատակ: Այդ մասին են վկայում ուսանողների բարձր հետաքրքրվածությունն այդ կարգի միջոցառումների նկատմամբ: Ավելորդ չենք համարում ընդգծել, որ թեմատիկ հետազոտական քննարկումները հատկապես մեծ արդյունք են տալիս մագիստրատուրայում՝ պայմանավորված ուսանողների թվաքանակով:

Բիզնես իրավունք և միջազգային արբիտրաժ բաժնի ուսանողների հետ համատեղ կազմակերպվել են կլոր սեղան-քննարկումներ՝ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական ոլորտի հինգ կոնվենցիաների բոլոր ազգային համակարգողների, ՀՀ ՇՄՆ շրջակա միջավայրի վրա ազդեցության ՊՈԱԿ-ի աշխատակիցների մասնակցությամբ: Դասընթացի շրջանակներում ուսանողները եղել են Շրջակա միջավայրի նախարարությունում, Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ՊՈԱԿ-ում, հնարավորություն են ունեցել լսել շրջակա միջավայրի վրա ազդեցության, որպես բնապահպանական կարևորագույն թեմայի մասին համատեղ դասախոսություն ՊՈԱԿ-ի իրավաբանական բաժնի պետի կողմից, առավել խորքային պատկերացնել գործընթացի բացերն ու թերությունները, պրակտիկայում փորձագետների համար ծագող դժվարությունները: Պրոֆ. Ա.Իսկոյանի անվան էկոլոգիական իրավունքի կենտրոնում բակալավրատի և մագիստրատուրայի ուսանողների համար դասախոսության է հրավիրվել նաև Բնապահպանության և ընդերքի տեսչության ղեկավարն ու անձնակազմի ներկայացուցիչները, որոնք ներկայացրել են բնապահպանական ստուգումների կազմակերպման ու անցկացման պրակտիկան, դժվարություններն ու բացերը, պատասխանել ուսանողների հարցերին:

2024 թվականի դեկտեմբերի 6-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դատական նիստերի դահլիճում էկոլոգիական իրավունքի կենտրոնի և ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ կազմակերպվել է «Շրջակա միջավայրի պահպանության իրավական հիմնախնդիրները միջազգային և ներպետական համատեքստում» խորագրով միջբուհական երիտասարդական գիտաժողով: ՀՀ տարբեր ԲՈՒՀ-երից շուրջ հիսուն ուսանողներ սահմանված ժամկետում ներկայացրել են իրենց վերլուծությունները և գիտաժողովի հանձնախմբի կողմից լավագույն ճանաչված տաս զեկույցներն իրենց հեղինակների կողմից ներկայացվել են գիտաժողովին: Գիտաժողովը նվիրվել է էկոլոգիական իրավունքի վաստակաշատ պրոֆեսոր Աիդա Բագրատի Իսկոյանի հիշատակին:

«Քաղաքացիական դատավարություն» դասընթացի շրջանակներում բակալավրատի 3-րդ կուրսի ուսանողները ամբիոնի դոցենտ Վ.Եսայանի նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ այցելել են Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Էրեբունի նստավայր:

«Ֆինանսական համակարգի հաշտարարությունը ՀՀ-ում» դասընթացի շրջանակներում Բիզնես իրավունք և միջազգային արբիտրաժ մագիստրոսական ծրագրի 1-ին կուրսի ուսանողները գիտաճանաչողական դասընթաց են անցել ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակում:

Ուսումնամեթոդական ծրագրերի, հարցաշարերի, խնդիրների, տեստերի ստեղծում և նոր առարկաների ներդրում

Ամբիոնի կողմից բավական ակտիվ կերպով աշխատանքներ են տարվել ուսումնա-մեթոդական ծրագրերի վերանայման, նոր դասընթացների մշակման և ներդրման, ուսումնամեթոդական նյութերի կազմման ուղղությամբ:

Բավականին արդյունավետ իրականացվում է նոր ներդրված դասընթացների դասավանդումը՝ <Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը>, <Կատարողական վարույթը ՀՀ-ում>, <Սնանկության վարույթը ՀՀ-ում>, <Միջազգային էկոլոգիական իրավունք>, ինչպես նաև ներդվել են <Ստրատեգիական որոշումների կայացումն իրավաբանների համար> և <Իրավունքների պաշտպանության անդրազգային մոդելները դասընթացները:

Ինչպես Իրավագիտություն մասնագիտության մագիստրոսական կրթական բոլոր ծրագրերում, այնպես էլ Բիզնես իրավունք և միջազգային արբիտրաժ կրթական ծրագրի համար իրականացվել է մոնիթորինգ՝ արտաքին ֆոկուս խմբային հետազոտություն և կազմվել է ինքնավերլուծություն, որի հիման վրա քննարկումներ են իրականացվում նոր դասընթացների ներմուծման կամ ընթացիկ դասընթացներում նոր թեմաների ընդգրկման առումով:

2. **Գիտահետազոտական աշխատանք**

2024-2025 թթ. ուս. տարվա ընթացքում ամբիոնի անդամների կողմից հրատարակվել **են 11 գիտական** հոդվածներ, որոնցից մեկը World Development Perspectivs միջազգային գիտական հանդեսում (Scopus):

Ամբիոնի կողմից տպագրության է հանձնվել Քաղաքացիական դատավարություն 2 դասագիրքը:

Ավարտական փուլում է Վարչական դատավարություն 2 դասագիրքը, նախատեսված է, որ առաջիկա երկու ամիսների ընթացքում այն կհանձնվի մեթոդ խորհրդին:

Տպագրվել է մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ:

Հաշվետու տարում ամբիոնի մեկ ասպիրանտ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել գիտական աստիճան: Երկու ատենախոսություններ էլ ներկայումս գտնվում են նախապաշտպանության փուլում: Ամբիոնի երկու դասախոսներ ստացել են դոցենտի գիտական կոչում:

Պաշտպանած և այդ ճանապարհին գտնվող ատենախոսական աշխատանքների գերակշիռ մասը հավակնում է հետագայում տպագրվելու գիտական մենագրության ձևով:

3. Կադրերի պատրաստում և վերապատրաստում

Ա. Ասպիրանտների, հայցորդների հետ տարվող աշխատանք

Ամբիոնի աշխատանքային ծրագրում հատուկ տեղ է զբաղեցնում գիտամանկավարժական կադրերի պատրաստումը:

Ամբիոնն ունի թվով մեկ հեռակա ասպիրանտ և 6 հայցորդներ: Ամբիոնային ասպիրանտ/հայցորդնեն իրենց գիտական զեկույցներով մասնակցում են ֆակուլտետում կազմակերպվող ամենամյա գիտական կոնֆերանսներին (2024 թ. Դեկտեմբերին երկու ասպիրանտ հանդես է եկել գիտական զեկույցներով) և հաջորդիվ ներկայացնում գիտական հոդվածներ տպագրության համար: Արդեն իսկ նշել ենք լավագույն փորձի մասին, որ ամբիոնային ասպիրանտներին ներգրավում ենք ուսումնա-գիտական նյութերի պատրաստման գործում, որը լավ փորձ է ապագա ուսումնա-գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ: Ամբիոնային ասպիրանտներին ներգրավում ենք ուսանողների հետ թեմատիկ քննարկումներ կազմակերպելու համար, որը և ասպիրանտներին է շահեկան՝ ապրոբացնելու իրենց ատենախոսական հետազոտության արդյունքները, և ուսանողներին է շահեկան՝ ծանոթանալու գիտական նոր մոտեցումներին և արդյունքներին: Ասպիրանտներին հաճախակի ներգրավում ենք քննությունների կազմակերպման մեջ, ինչը նպաստում են մեր ուսումնագիտական նոր կադրերի պատրաստմանը:

Ուշադրությունից դուրս չեն ամբիոնի դասախոսների վերապատրաստման հարցերը, որն արդեն կներկայացնենք ամբիոնային գործունեության հանրայնացման և միջազգայնացման բաղադրիչի շրջանակներում:

Ամբիոնային աշխատանքների հանրայնացմանն ու միջազգայնացմանն ուղղված ջանքերը

Այս ուղղությամբ ամբիոնը գործադրում է ջանքեր, որոնք առաջադրվում են նախևառաջ ֆակուլտետի ռազմավարական զարգացման հայեցակարգով: Կարևորում ենք տարբեր կրթական ծրագրերի հետ համագործակցության արդյունքում կրթական

ծրագրերի վերջնարդյունքներին բավարարող թե՛ գիտական, թե՛ ուսումնամեթոդական արդյունքների ապահովումը: Ներկայումս էլ միջազգային համագործակցության արդյունքում կազմվել են վարչական դատավարության և արբիտրաժի ծրագրերը:

Ամբիոնի դասախոսների կողմից՝ ամբիոնային գործունեության հանրայնացման առավել տրամաբանական ձևերից է նաև ամբիոնի անդամների՝ համատեղությամբ պրակտիկ զբաղվածությունը պետական և մասնավոր ծառայության ամենատարբեր՝ օրենսդիր, գործադիր, դատական, փաստաբանական, մասնավոր իրավախորհրդատվական ոլորտներում: Ամբիոնի առանձին դասախոսներ ներգրավված են օրենսդրական ակտերի նախագծերի մշակման աշխատանքային խմբերում, պրակտիկ աշխատողների վերապատրաստման ծրագրերում: Հատուկ կարևորենք, որ ոլորտային օրենսդրական ակտերի նախագծերը հիմնականում ընդունվում են ամբիոնի մասնակցությամբ ու ներկայացված կարծիքով: Ընդ որում, նման մասնակցությունն ապահովվում է թե միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող, թե պետական մարմինների աջակցությամբ գործող ծրագրերի շրջանակներում: Ամբիոնը լուրջ ներդրում ունի դատավորների և դատախազների վերապատաստման ծրագրերի իրականացման գործում: Ամբիոնի դասախոսների կողմից բարձր ակտիվություն է առկա ներհանրապետական կոնֆերանսներին, կլոր-սեղաններին, գիտական ակումբներին մասնակցության մասով, որին, ի դեպ, մեծապես նպաստում է հատկապես ամբիոնի դասախոսների համատեղությամբ աշխատանքը: Ամբիոնի առանձին դասախոսներ իրավական թեմաներով հարցազրույցներ են ունեցել հեռուստա- և ռադիո- եթերներով՝ հանրության համար լուսաբանելով մասնավոր իրավունքի արդիական հարցեր:

Ամբիոնային գործունեությունն իր մի շարք դրսևորումներով ապահովում է գործունեության միջազգայնացումը, արտասահմանյան կապերի ամրապնդումը, իրավական փորձի և գիտելիքների միջազգային փոխանակումը:

Քաղաքացիական դատավարության ամբիոնի հիմնական դասախոսները մասնակցել են ԵՊՀ Շարունակական կրթության կենտրոնի կողմից կազմակերպված տարբեր վերապատրաստումների:

Ամբիոնի դասախոս Գ.Գրիգորյանը որպես Հայաստանի դատական համակարգի պատվիրակության անդամ ճանաչողական այցով մասնակցել է մեկշաբաթյա վերապատրաստման ծրագրի Լատվիայի հանրապետությունում դատարանների կառավարման և արդիականացման լավագույն փորձը թեմայի շրջանակներում :

Ամբիոնի դոցենտ Օ.Գեղամյանը Չինաստանում մասնակցել է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի շրջանակներում կազմակերպված երկշաբաթյա վերապատրաստման դասընթացին :

Օ.Գեղամյանը Ֆրանսիայից ժամանած բնապահպան իրավաբանների պատվիրակության հետ որպես դասախոս ներգրավվել է նաև ապրիլի 21-25-ը ՀՀ Արդարադատության ակադեմիայի, Հայաստանում Ֆրանսիական դեսպանատան և Ֆրանս Ինթերփրայզ կազմակերպության կողմից դատավորների, դատախազների ու քննիչների համար կազմակերպած վերապատրաստման դասընթացին և այդ վերապատրաստման շրջանակում ուղեցույցի մշակմանը :

Էկոլոգիակա իրավունքի կենտրոնն ակտիվորեն ներգրավված է նաև Օրհուսի կոնվենցիայի ազգային զեկույցի մշակման գործընթացին, որի աշխատանքները համակարգվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Էկոլոգիական իրավունքի կենտրոնը ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի հետ համատեղ ներգրավվել է նաև «Էկոպարեկային ծառայության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում իրականացվող էկոպարեկների պարտադիր վերապատրաստման ծրագրում և հաջողությամբ իրականացրել առաջին խումբ էկոպարեկների վերապատրաստումը, տեստավորումն ու դրա հիման վրա վկայականների հանձնումը:

Կարևոր է ընդգծել, որ յուրաքանչյուր դասախոսի մասնակցությունը վերապատրաստումներին կամ քննարկումներին առաջընթացային քայլ է դասախոսությունների նյութերի, ինչպես նաև պրակտիկ օրինակների համալրման, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման ու ուսանողների հետ տարվող աշխատանքներին այդ նյութերն ու ձեռքբերումները ներկայացնելու համատեքստում:

Ուսանողների և ասպիրանտների հետ տարվող աշխատանքներ

Վերջում կցանկանայինք մի քանի խոսքով անդրադառնալ ուսանողության հետ տարվող աշխատանքներին, ինչը մեզ համար առաջնահերթությունների մեջ է: Խոսքը վերաբերում է ոչ թե ուսումնական ընթացիկ հարցերին, այլ արտաժամյա տարվող աշխատանքներին, որոնք իրենց էությամբ օրգանապես կապված են ուսումնական աշխատանքների հետ, և ոչ պակաս են նպաստում ուսանողների մասնագիտական կայացմանը:

Արտալսարանային կարևոր միջոցառումներից են դատախաղերի կազմակերպումն ու անցկացումը: «Բնական ռեսուրսների օգտագործման և պահպանության իրավական կարգավորումները ՀՀ-ում» դասընթացի շրջանակներում Բիզնես իրավունք և միջազգային արբիտրաժ մագիստրոսական ծրագրի առաջին կուրսի ուսանողներն ամբողջ կազմով ներգրավվել են և հաջողությամբ իրականացրել հանքարդյունաբերության ոլորտի դատական վեճի հիման վրա կազմակերպված դատախաղը:

Ամբիոնի դասախոս Մ. Խաչատրյանը որպես արբիտր հանդես է եկել Ուսանողական խորհրդի կողմից Fidus Concilium ծրագրի շրջանակներում կազմակերպված դատախաղին, որին մասնակցել են Իրավագիտության ֆակուլտետի բակալավրատի ուսանողներ:

Կարևորելով նաև Ուսանողական գիտական ընկերության հետ համագործակցությունը՝ նշենք, որ Քաղաքացիական դատավարության ամբիոնի հետ իրականացված միջոցառումներից են 2024-2025 թթ. ուսումնական տարվա ընթացքում Քաղաքացիական դատավարության դասընթացի շրջանակներում կազմակերպած թվով երեք և Վարչական դատավարություն դասընթացի շրջանակներում կազմակերպած մեկ մասնագիտական Օլիմպիադաների անցկացումը, որոնց ներգրավվել են շուրջ 90 ուսանողներ:

Ուսանողական գիտական ընկերությունը Քաղաքացիական դատավարության ամբիոնի հետ համատեղ կազմակերպել է նաև սեմինար-քննարկումներ, որոնցից

առաջինը՝ «Դատախազը որպես քաղաքացիական դատավարության սուբյեկտ» վարել է պրոֆ Վ.Հովհաննիսյանը, երկրորդը՝ «Շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնախնդիրները Երևան քաղաքում» վարել է դոցենտ Օ.Գեղամյանը:

2024 թ. հոկտեմբերի 8-ին կայացել է նաև Ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպված միջազգային գիտաժողով, որին քաղաքացիական իրավունք և դատավարություն ենթաբաժնում մասնակցել են թվով 11 ուսանողներ:

Քննադատական ասպեկտ:

Վերոհիշյալով հանդերձ՝ ամբիոնն ունի նաև թերացումներ, որոնց շարքում հատկապես ուշադրություն պետք է դարձնել ամիոնի անդամների կողմից Scopus և Web of science միջազգային համակարգի ամսագրերում տպագրման պասիվությանը:

Որպես թերություն, հիշատակման արժանի է նաև առանձին դեպքերում դասախոսների կողմից էլեկտրոնային կառավարման բնագավառում պարտավորությունների ուշացումով կատարումը, ինչը կարող է արտահայտվել, օրինակ՝ registrar համակարգում գնահատականների ներբեռնման ուշացման մեջ:

Հատկապես գոհացուցիչ չի կարելի համարել նաև ասպիրանտ/հայցորդների գիտական ներգրավվածությունը: Հատկապես համալսարանից դուրս ծանրաբեռնված աշխատանքը, դժվարացնում է անխափան կապն ու խոչընդոտում ծավալուն ներգրավածությանը:

Որոշակի խնդիր կա նաև ԵՊՀ-ի և այլ երկրների համալսարանների միջև կնքված պայմանագրերի հիման վրա պրոֆեսորադասախոսական հիմնական կազմի շարժունության ապահովման բնագավառում: Խնդիրը կայանում է հատկապես թվով քիչ տեղերի հատկացման մեջ, որի արդյունքում, երբեմն ԵՊՀ-ն մերժում է մեր դասախոսների ներգրավվածությունը

Ամփոփելով ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի կողմից 2024-2025թթ. ընթացքում իրականացված ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին հաշվետվության ներկայացումը, ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել ամբիոնի ողջ անձնակազմին կատարված հսկայածավալ աշխատանքի, նվիրվածության ու բարձր պատասխանատվության համար: Այդ որակների շնորհիվ ամբիոնը շարունակում է պահպանել իր բարձր հեղինակությունը, նպաստել ուսանողների մասնագիտական կայացմանն ու զարգացմանը և իրավագիտության ոլորտում համալսարանի և իրավաբանական ողջ համայնքի առաջընթացին:

Եթե կան հարցեր, որոնց չեմ անդրադարձել, առաջարկում եմ դրանք բանավոր քննարկել:

Շնորհակալություն ուշադրության համար:

Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Օ.Մ.Գեղամյան

23.10.2025

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ ՈՒՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի 2024-25 ուս. տարում կատարած ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին

27-ը հոկտեմբերի 2025 թ.

1. Ուսումնական և մեթոդական աշխատանքներ

1. *Ուսումնական և մեթոդական աշխատանքները* կազմակերպվել են ուսումնական պլանին և համալսարանի կառավարման մարմինների, ֆակուլտետի դեկանի որոշումներին համապատասխան: Կրեդիտային համակարգով ուսումնական ուղեցույցին համահունչ կատարվել են ընթացիկ ստուգումներ: Ընթացիկ և եզրափակիչ քննություններն ընթացել են ֆակուլտետի գիտխորհրդում հաստատած կարգին համապատասխան.

ա) Դասախոսությունների անցկացման եղանակների կատարելագործում, նոր եղանակների ներդրում.

Դասախոսությունների անցկացման եղանակների կատարելագործման համատեքստում նորամուծությունն այն է, որ նախաձեռնել ենք ուսումնական նյութի թարմացման աշխատանքներ, մասնավորապես՝ մշակում ենք ուսումնական ձեռնարկի հիմնական հատվածները և հասանելի դարձնում ուսանողներին, ինչը հնարավորություն է տալիս դասախոսությունների ընթացքում կենտրոնանալ առավել էական խնդիրների լուսաբանման վրա:

բ) Սեմինար և գործնական պարապմունքների անցկացման եղանակների և մեթոդների վերանայում, դրանց կատարելագործում և նոր մեթոդների ներդրում.

Որոշակիորեն բարելավվել է սեմինար և գործնական պարապմունքների մեթոդաբանությունը, մասնավորապես, յուրաքանչյուր տարի թարմացվում են գործնական պարապմունքների համար նախատեսված խնդիրները, որոնք անմիջականորեն փոխկապակցվում են արդի իրավաքաղաքական իրադարձությունների հետ: Սեմինարներին հանձնարարվող զեկույցների թեմաներն այնպիսին են, որ հնարավորություն են տալիս ոչ միայն առավել համակողմանի յուրացնեն ծրագրային թեմաները, այլև ձեռք բերեն ստեղծագործական աշխատանքի հմտությունները:

Խնդիրները լուծելիս մեծ ուշադրություն է դարձվում ոչ միայն դրանք ճիշտ լուծելու, այլև կոնկրետ հիմնավորումներ ներկայացնելու հմտություններին:

Գործնական պարապմունքները, գրեթե առանց բացառության, անցկացվում են դասախոսների կողմից մշակված խնդիրների ու առաջադրանքների քննարկմամբ: Խնդիրների մշակմանը մասանբ մասնակցում են նաև ուսանողները (ինչը գնահատվում է «մասնակցություն» բաղադրիչի շրջանակներում), ինչպես նաև ասպիրանտները:

գ) Ուսումնամեթոդական ծրագրերի, հարցաշարերի, խնդիրների, թեստերի ստեղծումը և նոր առարկաների ներդրումը.

Առանձին դասընթացների մասով վերջին տարիների ընթացքում մշակվել և էլեկտրոնային եղանակով ուսումնական կայքերում զետեղվել են խնդիրների ժողովածուներ, որոնք պարբերաբար թարմացվում են՝ օրենսդրական փոփոխություններին զուգահեռ:

2. *Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ուսումնական ծանրաբեռնվածության առանձնահատկությունն այն է*, որ վերջինս ներառում է համալսարանի առանձին ֆակուլտետներում «Իրավունքի հիմունքներ» դասընթացի դասավանդումը, այն արդեն դարձել է կամընտրողական: Ամբիոնի դասախոսները մի շարք այլ ֆակուլտետներում դասավանդում են նաև «Պետության և իրավունքի տեսություն» առարկան: Այս տեսանկյունից արձագանքները հիմնականում դրական են: Միաժամանակ, նկատվում է այդ առարկաներից աստիճանաբար հրաժարվելու միտում, ինչը, ցավոք, ևս սպասելի է, հաշվի առնելով, որ մասնագիտական առարկաների կրճատման պարագայում այդ ֆակուլտետներում կամընտրողական մեթոդաբանությամբ առարկաներ ընտրելը գրավիչ չէ:

3. *Հեռակա բաժնում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ուղղված քայլեր:*

Դասավանդումը և դրա մեթոդական ապահովումը կատարվում է գրեթե նույն չափանիշներով ու մեթոդաբանությամբ, ինչ առկա համակարգում, պարզապես դրանք հարմարեցված են դասավանդման այդ եղանակի հետ և փորձ է արված հնարավորինս չվնասել արդյունավետությունը:

Քանի որ այս ուսուցման ձևի հարցում ամբիոնը ունի նկատելի դերակատարում, հատկապես այլ բուհերից *փեղափոխությունների տեսանկյունից*, ձգտում ենք հնարավորինս ուշադիր լինել և բացառել նվազագույն պահանջներին չբավարարող

անձանց մուտքը: Այս հատվածի հետ աշխատանքի լրացուցիչ բարդությունն այն է, որ ուսանողների ունակությունների միջև տարբերությունը անհամեմատ մեծ է և օբյեկտիվորեն դժվար է լինում ընտրել այնպիսի բարդության նյութ, որ հասանելի լինի թույլ առաջադիմություն ունեցողների համար, բայց և բավարար չափով արդյունավետ լինի բարձր առաջադիմություն ունեցողների համար:

2. Աշխատանք ուսանողների հետ

1. Հաշվետու տարում կազմակերպվել է ամբիոնի գծով ուսանողական գիտական ընկերության միջոցով 4 գիտակրթական միջոցառում, որոնցից մեկը եղել է միջազգային գիտաժողով, իսկ 3-ը՝ օլիմպիադա, համապատասխանաբար՝ «Պետության և իրավունքի տեսություն» (մասնակցել է 15 ուսանող), «Հայաստանի պետության և իրավունքի պատմություն» (մասնակցել է 22 ուսանող) և «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն» (մասնակցել է 20 ուսանող) առարկաներից: Բացի այդ, կազմակերպել ենք մեկ արտալսարանական դասախոսություն՝ «Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» թեմայով, մեկ այցելություն ՀՀ Փաստաբանների պալատ և մեկ ներֆակուլտետային մրցույթ՝ «Սահմանադրական բարեփոխումների հիմնական վեկտորները» թեմայով:

Այս առնչությամբ նախորդ ուստարվա հաշվետվությունը ներկայացնելիս, ընդգծել էի նաև 1-ին և 2-րդ կորսերի ուսանողների մասնակցության անհրաժեշտությունը, ինչը այս տարի մասամբ բարելավվել է, ուղղակի անհանգստացնողը ֆակուլտետից մասնակցող ուսանողների ընդհանուր թվի պակասն է:

Իհարկե, զուտ ձևական կողմը ՈՒԳԸ պահում է, սակայն այս դեպքում մենք ևս անելիք ունենք, մասնավորապես ուսանողներին ընտրելու և նրանց կոնկրետ թեմաներ առաջարկելու տեսանկյունից: Օրինակ՝ մրցույթին հաղթող ճանաչված Տիգրան Թաշչյանի պարագան հենց այդպիսին էր:

3. Գիտահետազոտական աշխատանքներ ամբիոնի գիտական ուսումնամեթոդական հրատարակությունների ամփոփ տվյալները

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը արդյունավետ է աշխատել, մասնավորապես՝ հրատարակել է.

Մենագրություն և արտաֆակուլտետային ձեռնարկ (6 հրատարակություն).

Գ.Վիրաբյան.

1. Իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգը: Մենագրություն, Եր.: ԵՊՀ հրատ., 2025, 322 էջ:

Տ.Սիմոնյան.

1. «Հասարակագիտություն», 11-րդ դասարան, Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար /Ն.Գալստյան, Տ.Սիմոնյան՝ թեմա 1-ին և 5-րդ, Ա.Մանուչարյան/, Երևան, «Զանգակ» հրատ., 2025 - 195 էջ:

2. «Հասարակագիտություն», 11-րդ դասարան, Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար /Կ.Հարությունյան, Տ.Սիմոնյան՝ թեմա 1-ին, Ա.Մանուչարյան, Ն.Գալստյան/, Երևան, «Զանգակ» հրատ., 2025 - 176 էջ:

3. «Խորհրդարանական մշակույթը և էթիկան Հայաստանի Հանրապետությունում», հայերեն և ռուսերեն, Երևան, «Հայրապետ» հրատ., 2024, 176 էջ:

4. «Հասարակագիտություն», 11-րդ դասարան, Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար /Կ.Հարությունյան, Տ.Սիմոնյան՝ թեմա 2-րդ, Տ.Հարությունյան, Հ.Բարսեղյան/, Երևան, «Զանգակ» հրատ., 2024 - 144 էջ:

Ա.Ասատրյան.

1. «Փաստաբանությունը Հայաստանի Հանրապետությունում», համահեղինակներ՝ Ս.Դիլբանդյան, Ս.Բաբայան, Ա.Զոհրաբյան Ա.Հայկյանց և մյուսները, 2025թ., 520 էջ:

Տպագրվել է 7 գիտական հոդված:

Նշանակալից է «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմության» առարկայի «Նոր և նորագույն ժամանակների» հատվածի համար ուսումնական ձեռնարկի պատրաստումը: Աշխատանքներին ներգրավված են ամբիոնի դասախոսների գերակշիռ մասը, ներկա փուլում պատրաստ է էլեկտրոնային նախնական տարբերակը՝ շուրջ 600 էջ, որն ընդհանուր խմբագրման նպատակով փոխանցվել է ընդհանուր խմբագիր պարոն Վաղարշյանին: Այս աշխատաանքին նախորդել են առարկայական քննարկումներ, պարոն Վաղարշյանի կողմից համահեղինակներին է փոխանցվել հանգամանալից մեթոդաբանությունը և թեմաների ենթահարցերը: Կարծում եմ, արդեն այս փուլում այդ նյութը կարող է զետեղվել

կայքերում՝ դասախոսությունների տեսքով, իսկ վերջնարդյունքում հնարավոր է նաև միջնորդենք այն տպագրելու համար:

Գիտական հոդվածները հիմնականում՝ վերաբերում են ամիբիոնի ծրագրերում ներառված «Իրավունքի օնթոլոգիա» մենագրության բովանդակային հարցադրումներին:

4. Միջազգային, հանրապետական և ֆակուլտետի գիտաժողովներում ներկայացվել է 9 զեկույց

Գևորգ Դանիելյան.

1. Պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտական նստաշրջանի 2-րդ բաժանմունքի նիստերի վարող՝ պարոն Վ.Այվազյանի հետ համատեղ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, 2024թ. դեկտեմբերի 11-12:

2. Համաժողով, նվիրված Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցին՝ «Համահայկական պետականություն. հայոց իրավունքներ և հողային պահանջատիրություն» թեմայով, 2025թ. ապրիլի 29-ին, Երևան:

3. «Եկեղեցու և պետության հարաբերությունները» խորագրով քննարկում՝ եկեղեցականների և իրավագետների մասնակցությամբ, 2025թ. հունիսի 16-ին: Ներկայացվել է զեկույց՝ «Եկեղեցականների քաղաքականության զսպվածության սկզբունքը» վերտառությամբ:

4. «Ազգային ինքնության վերանայման փորձերը Հայաստանում» թեմայով գիտաժողով, 2025թ. մայիսի 13-ին, Երևան: Գիտաժողովի ներկայացվել է զեկույց՝ «Հայոց ցեղասպանությունը, որպես ազգային ինքնության դեմ ուղղված ոճրագործություն» վերտառությամբ:

5. «Սահմանադրություն, պետականություն և թանգարաններ» թեմայով միջազգային գիտաժողով՝ նվիրված ՀՀ Սահմանադրության ընդունման 30-ամյակին», 2025թ. հունիսի 3-ին, Երևան, Պատմության թանգարան: Գիտաժողովին ներկայացվել է զեկույց՝ «Հայաստանում սահմանադրականության պատմաիրավական նախադրյալները» վերտառությամբ:

Տարոն Սիմոնյան.

1. Զեկույց՝ «Ներդրումային արբիտրաժ. տեսություն և պրակտիկա» թեմայով 2025թ-ի հոկտեմբերի 3–5-ը Վենետիկում Բոլոնիայի համալսարանի և Ռեզոլվ ակադեմիայի համատեղ կազմակերպված «Միջազգային արբիտրաժի վարպետություն» համաժողով, աշնանային հավաք - համաժողովում:

2. Զեկույց «Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը միջազգային արբիտրաժային գործընթացներում» թեմայով 2025թ-ի օգոստոսի 25-ին Ռեզոլվ ակադեմիայի կողմից կազմակերպած «Արբիտրաժային գործընթացների կառավարում. արբիտրները՝ որպես պատշաճ և արդյունավետ գործընթացի ապահովման երաշխավորներ» միջազգային վեբինար:

3. Զեկույց՝ «Միջազգային հանցագործությունների հետապնդման գլոբալ մոտեցումները և համընդհանուր իրավազորության սկզբունքը» թեմայով, 2024թ-ի սեպտեմբերի 11-13-ին Երևանում՝ Մատենադարանում, Ճշմարտության և Արդարության կենտրոնի (The Center for Truth and Justice) կողմից կազմակերպված «Մարդու իրավունքներ և հաշվետվողականություն. Հետկոնֆլիկտային արդարության ճանապարհներ» երրորդ միջազգային համաժողով

Միջազգային գիտաժողովներում ներկայացված զեկույցներն են՝

1. **Արմեն Ասատրյան**. «Իրավական ակտերի բողոքարկումը ընդհանուր իրավասության և արբիտրաժային դատարաններում»թեմայով հեռավար մասնագիտական համաժողով/վեբինար, կազմակերպված ՌԴ Փաստաբանների դաշնային պալատի կողմից, 2025թ. մայիսի 29:

2. Հայկ Հարությունյան.

1. 2025թ. ապրիլի 28-ից մինչև մայիսի 2-ը մասնակցել է Սեուլում (Հարավային Կորեա) Ասիական զարգացման բանկի կողմից կազմակերպված «Ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջանի պետական էլեկտրոնային գնումների ցանցի ամրապնդում» թեմայով կրթական ծրագիր-գիտաժողովին:

2. 2025թ. հոկտեմբերի 20-23-ին մասնակցել է Քիշնևում (Մոլդվայի Հանրապետություն) «PRMPAL»-ի և Մոլդովայի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ համատեղ կազմակերպված «Աուդիտը գործնականում (AIP) և Կենտրոնական ներդաշնակեցման միավորների մարտահրավերները (CHU) աշխատանքային խմբերի հանդիպում-գիտաժողովին:

5. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություն

2025թ. փետրվարի 2-ին տեղի է ունեցել «Մարդու իրավունքներ և սահմանադրական արդարադատություն» ծրագրով առկա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանությունը: Արդյունքները ունեն հետևյալ պատկերը՝

5 մագիստրոս, 5 գերազանց գնահատական:

2025թ. մայիսի 6,7,8-ին տեղի են ունեցել առկա ուսուցման բակալավրիատի «Սահմանադրաիրավական» մասնագիտացման ավարտական աշխատանքների պաշտպանությունը: Արդյունքները ունեն հետևյալ պատկերը՝

22 ուսանող, որից մեկը գնահատվել է անբավարար, 8-ը՝ բավարար, 8-ը՝ լավ, 6-ը՝ գերազանց:

2025թ. հունիսի 11-ին տեղի է ունեցել հեռակա ուսուցման բակալավրիատի «Սահմանադրաիրավական» մասնագիտացման ավարտական աշխատանքների պաշտպանությունը: Արդյունքները ունեն հետևյալ պատկերը՝

մասնակցել է 6 ուսանող, որոնցից 5-ը գնահատվել է բավարար և մեկը՝ անբավարար:

Ներկայումս ամբիոնի «Մարդու իրավունքներ և սահմանադրական արդարադատություն» ծրագրում ներգրավված է 6 մագիստրոս 2-րդ տարվա, 8 մագիստրոս՝ 1-ին տարվա /2025-26 ուս. տարի/, Սահմանադրաիրավական մասնագիտացմանը առկա ուսուցմամբ ներգրավված է 44 ուսանող, որից 19-ն են ամբիոնի ավարտական աշխատանքներ գրում: 1-ին տարվա մագիստրանտների թիվը կրկնապատկվել է, եթե նախորդ տարիներին ապահովվում էր նվազագույն քանակը, ապա այս տարի այդ խնդիրը արդեն ամբողջովին լուծվել է, ինչը ծրագրում ներգրավված դասախոսական կազմին ևս պետք է հուշի, որ ձեռք բերվածով բավարարվելը լավագույն միջոցը չէ, հարկ է ծրագիրը դարձնել էլ ավելի գրավիչ ու արդյունավետ:

6. Գիտամանկավարժական կադրերի պատրաստում և վերապատրաստում

Հաշվետու շրջանում ամբիոնում գործում է 18 դասախոս՝ 11-ը հիմնական և 7-ը արտաքին համատեղությամբ:

Ներկայումս ուսանում են 3 առկա ասպիրանտ, 1 հեռակա ասպիրանտ և 3 հայցորդ:

2025թ. մայիսին ամբիոնի հայցորդ Ա. Սումբատյանը հանձնել է մասնագիտական մինիմումը և ստացել գերազանց:

Ասպիրանտների և հայցորդների հետ տարվող աշխատանքը համակարգված է, արդյունքները կանխատեսելի են:

Կարծում եմ, հաշվի առնելով ամբիոնի դասախոսական կազմի միջին տարիքը, այլ աշխատանքում ներգրավվածության բարձր տոկոսը, ասպիրանտների և հայցորդների ընդհանուր թվի ավելացմանն ուղղված մեր նկատառումներն արդարացված են:

Այս ոլորտում խնդիրը ասպիրանտների և հայցորդների տեղերի համար հայտեր ներկայացնելն է, քանի որ գրեթե հիմնականում՝ վերապահվել է ղեկավարելու իրավունք ունեցող դասախոսների վրա, իսկ համապատասխան փորձի ու մշակույթի պակասն իրեն զգացնել է տալիս, մասնավորապես, ծանուցումից հետո անցել է 3 շաբաթ, և միայն կրկնակի հիշեցումներից հետո ներկայացվեցին հայտեր:

7. Ամբիոնի համալսարանական և արտահամալսարանական գործունեությունը

Ամբիոնի անդամները վերապատրաստման կամ ընդհանուր կրթական ծրագրերով դասախոսել են նաև այլ կազմակերպություններում. Գ. Դանիելյանը՝ Պետական կառավարման ակադեմիայում, Կ. Ամիրյանը՝ Արդարադատության ակադեմիայում, Ա.Ասատրյանը՝ Փաստաբանների պալատում:

Ամբիոնի անդամները՝ Գ.Դանիելյան, պարբերաբար մասնակցում են վերապատրաստման դասընթացների: Մասնավորապես Գ. Դանիելյանը վերապատրաստման դասընթացներ է անցկացրել Աուդիտորական պալատում գրանցված աուդիտորների համար:

Արմեն Ասատրյանը իրականացրել է վերապատրաստում Փաստաբանների պալատի կողմից կազմակերպված «Պայմանագրային պարտավորությունների առանձնահատկությունները և հիմնախնդիրները քաղաքացիական իրավունքում» թեմայով, 2024թ. մարտի 29-ին:

8. Ամբիոնի աշխատակարգը

Ամբիոնի նիստերն անցկացվել են առնվազն ամիսը 1 անգամ: Ամբիոնի նիստերում, ըստ նախապես հաստատված տարեկան ծրագրի՝ լսվել են ուսումնական, գիտական բնույթի հարցեր: Դրանք վերաբերել են դասախոսություններ կարդալուն, գործնական և լաբորատոր պարապմունքներ անցկացնելուն, մագիստրոսական թեզերի ընթացքին, գրախոսելուն, ստուգարքներ և քննություններ անցկացնելուն, արտալսարանական աշխատանքներին, արդիական հիմնահարցերով համալիր գիտական հետազոտություններ նախաձեռնելուն և այլն:

9. Թերությունները և ամբիոնի աշխատանքների բարելավման ուղղությամբ նկատառումները

Առաջնահերթ խնդիր եմ համարում կարգապահության հարցը: Իհարկե, խոսքը էական խախտումների մասին չէ, քանզի արձանագրվում են սոսկ մասնակի ուշացումներ, սակայն անհանգստացնողը դրանց անհարկի տարածվածությունն է: Կոնկրետ դա նկատվում է պրակտիկ աշխատողների, հատկապես՝ պաշտոնյաների առնչությամբ, ինչը հիմնականում՝ օբյեկտիվ պատճառներ ունի: Խնդրի սուբյեկտիվ կողմը մեր ուշադրության կենտրոնում է, միաժամանակ գիտական խորհրդին ենք փոխանցում իրենց խնդրանքը՝ դասաժամերը վերանայելու կտրվածքով: Մասնավորապես, առաջարկվում է 40 րոպե տևողությամբ 2 դասը միավորել 70 րոպե տևողությամբ մեկ դասի, ինչը արդեն ընդունված է մի շարք բուհերում և հնարավորություն է տալիս դասերն առավել արդյունավետ կազմակերպել: Բոլոր դեպքերում 5 կամ 10 րոպե ընդմիջումների կարիքը չի զգացվում, փոխարենը անհարկի ընդհատվում է նույն առարկայի դասավանդումը:

Մտահոգող է նաև գիտական հետազոտությունների վիճակը: Խոսքը հատկապես՝ միջազգային հանդեսներում հրատարակումների մասին է: Ընդհանրապես, հրատարակման ոլորտում դրական տեղաշարժ կա, քանզի մենք ունեինք դասախոսներ, որոնք տևական ժամանակով զերծ էին մնում գիտական աշխատանքների կատարելուց, սակայն ներկա պահանջներին բավարարող աշխատանքները դեռևս անհրաժեշտ ծավալի չեն հասել: Այս հարցը մեր ուշադրության կենտրոնում է, և իմ դիտարկումներով մենք առաջիկայում կունենանք համապատասխան հրատարակություններ:

Հաջորդ խնդիրը ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների և դրանց հետ տարվող աշխատանքն է: Նախորդ տարի հաշվետվությամբ արձանագրել էինք, որ օրինակելի թեմաները, ըստ դասախոսների՝ համեմատաբար բարդ են ընկալվել: Իհարկե, նախ, խոսել ենք այն մասին, որ թեմաները նախապես ուղարկվել է բոլոր դասախոսներին և որևէ բացասական արձագանք չի եղել: Բացի այդ, թեմաների ինքնատիպությունը հետապնդել է արտագրություններից խուսափելու նպատակ: Ինչևէ, այս տարի ընտրել ենք այլ մեթոդաբանություն՝ օրինակելի թեմաներն ընտրելիս, կամ միամգամայն նոր թեմա առաջադրելիս, ուսանողները դրանք քննարկել են իրենց ղեկավարների և ինձ հետ: Արդյունքները, կարծում եմ, դրական կլինեն, սպասենք, թե ինչպես դրան կարձագանքեն հանձնաժողովների նախագահներն իրենց հաշվետությամբ:

Որոշ խնդիրներ ունենք ասպիրանտների և հայցորդների հետ տարվող աշխատանքի կտրվածքով: Այս մասին խոսում եմ, ելակետ ընդունելով այն իրավիճակը, որ արդեն մեկ-երկու տարի հետո առանձին ասպիրանտներ կամ հայցորդներ կասեցնելու դիմում են ներկայացնում, իսկ սահմանված ժամկետում ավարտուն տեսքի աշխատանք ներկայացնելը, ցավոք, դարձել է ոչ թե օրինաչափություն, այլ բացառություն: Այս հարցը առանձին քննարկելու անհրաժեշտություն ենք տեսնում, իսկ մինչ այդ՝ որոշել ենք առայժմ ձեռնպահ մնալ ասպիրանտների հայտ ներկայացնելուց:

Միջազգային համագործակցության տեսանկյունից, ցավոք, չունենք ինքնուրույն ծրագրեր, այլ մասնակցում ենք արդեն իսկ այլ կառույցների կողմից նախաձեռնած ծրագրերին: Իրականում խնդիրը այնքան էլ միանշանակ չէ, քանզի ամբիոնի կողմից առաջարկվող ծրագրերը ամբողջովին համահունչ չեն միջազգային կազմակերպությունների կողմից նախապես որգերգրած քաղաքականության հետ, ուստի ներգրավված ենք միայն մասամբ համապատասխանող ծրագրերին:

Կարծում եմ, դեռևս անհրաժեշտ չափանիշների չեն բավարարում նաև արտալսարանական աշխատանքները: Այս ոլորտում վճռորոշը դարձել է ուսանողական կառույցների նախաձեռնողականությունը: Իհարկե, վերջիններս իրենք են մոտենում և քննարկում իրենց առաջարկությունները, խնդրում, որ մենք մեր առաջարկությունները փոխանցենք, սակայն չենք կարող չարձանագրել, որ այս հատվածում դասախոսական կազմը չի ցուցաբերում անհրաժեշտ ակտիվություն: Սա վերաբերում է նաև ասպիրանտներին ու հայցրոդներին, որոնք ուսանողների

մասնակցությամբ արտալսարանական միջոցառումներին գրեթե չեն մասնակցում, թեպետ՝ նախապես իրազեկվում են:

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի
պետության և իրավունքի տեսության ու պատմության
ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Գ.Բ. ԴԱՆԻԵԼՅԱՆ**